Հավելված

Արմավիրի մարզի Շենավան
համայնքի ավագանու
16.01.2017թ. N 2-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Շենավան համայնքի

2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Մկրտչյան

2017 թ.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Համայնքը հիմնադրվել է 1820-ական թվականներին :

Շենավան համայնքը գտնվում է Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 20 կմ հվ- արմ:

Համայնքը զբաղվում է պտղաբուծությամբ , բանջարաբուծությամբ , խաղողագործությամբ և անասնապահությամբ:

Ունի միջնակարգ դպրոց , մշակույթի տուն , գրադարան , կապի բաժանմունք , բուժկենտրոն :

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1648 բնակիչներ , որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 46 տոկոսը :

Բնակչության սոցիալական կազմը՝

1/ երեխաներ , 0-6 տարեկան - 104 երեխա ,

2/ պատանիներ, 7-17 տարեկան - 151 երեխա ,

3/ 18- 65 տարեկան – 585 բնակիչ ,

4/ թոշակառու - 198 բնակիչ ,

5/ նպաստառու - 16 բնակիչ ,

6/ հաշմանդամներ – 32 բնակիչ ,

7/ աշխատունակ – 759 բնակիչ ,

8/ փախստական – 0

9/ գործազուրկներ – 518 բնակիչ ,

10/ ընտանիքների ծխերի թիվը - 358 տնտեսություն ,

11/ գրանցվածները փարոս համակարգում – 42 հոգի ,

12 / գրանցված ընտրողների թիվը - 1221 հոգի :

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որը ընտրվում է 5 տարին մեկ անգամ : Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով

1/ Տեղական - 1 դրույք ,

2/ Աշխատակազմի քարտուղար - 1 դրույք ,

3/ Գլխավոր հաշվապահ - 1 դրույք ,

4/ Ֆինգործակալ - 1 դրույք ,

5/ Սպորտի և երիտասարդության հարցերով մասնագետ - 1 դրույք ,

6 / Օպերատոր - 1 դրույք

Համայնքի ենթակա կառույցներ

1/ Մշակույթի տան պահակ - 1 դրույք ,

2/ Հավաքարար - 1 դրույք

Գրադարան

1/ Գրադարանավար - 1 դրույք :

Շենավան համայքի աշխատակազմի և ենթակա կառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 13 աշխատակիցներից :

Համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամից :

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Շենական համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ : Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է և գտնվում է անմխիթար վիճակում:

1.5 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է աղբահանության կենտրոնացված համակարգ , որը թույլ չի տալիս աղբը թափել համայնքի տարածքում :

Տարածաշրջանում կիսաչորային կլիմայի գերակայության պայմաններում ոռոգումը կատարվում է ինքնահոս եղանակով, բարձրադիր վայրերում օգտագործվում է պոմպեր :

1.6 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բնակելի տների թիվը կազմում է 358 տուն , ընդհանուր մակերեսը 11 665 քառակուսի մետր , ոչ բնակելի մակերեսը 27 340 քառակուսի մետր , ընդհանուր մակերեսը 39 005 քառակուսի մետր:

Բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է մոտ 48 ընտանիք :

1.7 ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը կազմում է 954.76 հա մակերես :

1/ Վարելահողեր - 433.1 հա

2/ Բազմամյա տնկարքներ - 348.7 հա

3/ Այլ հողատեսքեր – 25.63 հա

4/ Դաշտային ճանապարհներ - 16.77 հա

5/ Տնամերձ հողեր - 125.19 հա

6/ Գերեզմանատուն - 5.37 հա

7/ Դպրոց - 1.9 հա

8/ Հուշարձանի տարածք - 1.19 հա

9/ Գյուղամիջյան փողոցներ - 9.7 հա

10/ Սեփականաշնորհված հողեր - 588.7 հա

11/ Մեկ հողաբաժնի չափը - 0.83 հա

12/ Հատուկ պահպանվող տարածքներ - 6.56 հա

13/ Համայնքի սեփականության հողեր - 588.7 հա

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի գյուղատնտեսական տնտեսությունները զբաղվում են ցորենի , գարու , առվույտի , եգիպտացորենի , բոստանբանջարեղենի , պտղատու այգիների , խաղողի այգիների և այլ կուլտուրաների արտադրությամբ , որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծամասսամբ կախված է բնության քմահաճույքներից :

Բնակչությունը զբաղվում է նաև անասնապահությամբ , ոչխարաբուծությամբ և մեղվաբուծությամբ :

1.9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ունի 1 միջնակարգ դպրոց՝ վերջին տարիները մասսամբ վերանորոգվել է 2011-2012թթ , ջեռուցումը լոկալ , ուր սովորում է մոտ 182 աշակերտ : Դպրոցն ունի 37 աշխատող :

1.10 ՄՇԱԿՈՒՅԹ , ՍՊՈՐՏ , ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 մշակույթի տուն , որը գտնվում է անմխիթար վիճակում և չի գործում: Քանի որ մշակույթի տունը չի գործում, գրքային ֆոնդը պահպանելու նպատակով տեղափոխվել է Շենավանի միջնակարգ դպրոց, ունի 5354 միավոր գիրք :

1.11 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է 1 ամբուլատորիա , շենքային պայմանները գտնվում են բավարար վիճակում : Բուժ ամբուլատորիայում աշխատում է 1 ընտանեկան բժիշկ, 1 բուժքույր լաբորանտ, 1 մանկական բուժքույր, 1 կրտսեր բուժաշխատող, 1 հաշվապահ, 1 օպերատոր:

1.12 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի տարածքում գործում է 4 առևտրի կետ , որոնք հիմնականում զբաղվում են սննդի, ծխախոտի , ալկոհոլային խմիչքների և այլ ապրանքների վաճառքով : Խանութները հաշվառված են պետական հարկային մարմնում , ինչպես նաև եռամսյա կտրվածքով վճարում են համապատասխան տեղական տուրք համայնքի բյուջեին՝ գործնեության թույլտվության համար : Համայնքում չկա կենցաղային սպասարկման և ծառայության ոչ մի օբյեկտ :

1.13 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Վերջին երեք տարիների ընթացքում նկատվել է դրական տեղաշարժ ՏԻՄ- երի և բնակչության փոխհարաբերություններում : ՏԻՄ- երի գործունեությունը դարձել են թափանցիկ և հրապարակային , որը զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածության ՏԻՄ- երի ընդունած որոշումների և կատարած աշխատանքներին : Մյուս կողմից համայնքի բնակիչները սկսել են ակտիվորեն մասնակցել ՏԻՄ- երի կողմից կազմակերպած հասարակական հանրօգուտ աշխատանքների հանրային հանդիպումներին , լսումներին ու միջոցառումներին : Համայնքի դպրոցում կամ գյուղապետարանում տարեկան երկուսից երեք անգամ կազմակերպվում է հանրային լսումներ և քննարկումներ , տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվում են ուսուցման վերապատրաստման դասընթացներ՝ սեմինարներ , որոնց հաճույքով

մասնակցում են համայնքի ՏԻՄ - երը և աշխատակազմի մասնագետները , այնպես էլ համայնքի որոշ ակտիվ բնակիչներ :

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքում չկան գործող արտադրական ձեռնարկություններ :

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքը ունի ԲՈՒՀ- ի ավելի քան 65 շրջանավարտ , տարբեր մասնագիտություններով , որոնք կարողանում են օգնել համայնքի կրթության ու դաստիարակության , մշակույթի , շինարարական աշխատանքներին:

Համայնքի աշխարհագրական դիրքը գտնվում է ծովի մակարդակից 902 մետր բարձրության վրա :

1.16 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1/ Մշակույթի տան ամբողջական վերանորոգման անհրաժեշտություն:

2/ Մանկապարտեզի շենք ամբողջական վերանորոգման անհրաժեշտությաուն:

3/ Ներհամայնքային ճանապարհների և փողոցների ոչ բարվոք վիճակը, խմելու ջրի ներցանցային համակարգի անբավարար վիճակը :

4/Համայնքի ամբողջական գազաֆիկացման անհրաժեշտությունը:

5/ Համայնքի գյուղապետարանի ջեռուցման համակարգի անցկացման անհրաժեշտություն:

6/Բնակարանային շինարարությունը կանգնած է , սոցիալ - տնտեսական վիճակի վատթարացման հետևանքով չէն կառուցվում բնակարաններ :

7/ Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճը :

8/ Գործազրկության բարձր մակարդակը :

9/ Եկամուտների նվազումը :

1.17 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1/ Բարձրակարգ կրթության մասնագետների առկայություն:

2/ Մեծ աշխատուժի առկայությունը :

3/ Գյուղատնտեսական մթերքների մթերման և վերամշակման անհրաժեշտությունը:

1.18 ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐ

1/ Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները :

2/ Արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի աճը :

3/ Ներհամայնքային ճանապարհները ունեն ասֆալտապատման խիստ կարիք :

4/ Հակակարկտային կայանների լրացուցիչ տեղադրման անհրաժեշտություն:

2 . ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավվել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական մշակույթային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ ,

բարեկարգ և ամենաբարեկեցիկ համայնքներից մեկը : Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

1/ Զարգացնել գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում,

2/ Կազմակերպել համայնքի բնակչության մշակույթային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին ,

3/ Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը ,

4/ Կատարել ներհամայնքային ճանապարների խճապատում և ասֆալտապատում , ինչպես նաև գիշերային լուսավորության անցկացում,

5/ Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրեր, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրներ .

ա/Խմելու ջրի նոր ներհամայնքային համակարգի անցկացում

բ/ Մանկապարտեզի վերանորոգում և վերաբացում

դ/ Դպրոցի վերանորգում և վերազինում :

ե/ Համայնքի ամբողջական գազաֆիկացում:

զ/ Մշակույթի տան հիմնանորոգում :

- <u>Խմելու ջրի ներհամայնքային համակարգի վերանորոգում</u>

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը .

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1960 - ական թվականին : Ջրագծերի կառուցման օրվանից ներհամայքային համակարգը հիմնանորոգման չի ենթարկվել և ֆիզիկապես մաշված ջրագիծը ենթակա է փոփոխման <<հիմնանորոգման >> :

Ծրագրի նպատակն ու խնդիրները .

Ծրագրի հիմանական նպատակն է՝

- ապահովել համայնքը շուրջօրյա, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան խմելու ջրով ,

- վերացնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները ,

- նվազագույնի հասցնել խմելու ջրի շռայլումները ,

- ապահովել ողջ համայնքի տնտեսություններին խմելու ջրով :

• ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ՝

- Կազմել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մոտավոր նախահաշիվ :

- Համայնքի անդամներից ձևավորել կատարվող աշխատանքները վերահսկելու համար :

• ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրականացնելով այս ծրագիրը՝ համայնքի 100 % -ը կապահովվի շուրջօրյա խմելու ջրով : Կնվազի ջրի կորուստները ներկայիս 40-50 % -ից հասցնելով նվազագույնի :

3. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

3.1 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը հիմնադրվել է 1960- ական թվականներին: Այն կառուցման օրվանից առ այսօր չի վերանորոգվել: Այն հանդիսանում է համայնքի միակ մշակույթի օջախը: Բնակչությունը չունի աշխատանքից հետո ազատ ժամերին հանգստանալու և զբաղվելու վայր : Համայնքի առաջնահերթ խնդիրներից է նշված կառույցի ամբողջովին վերանորոգումը և բնականոն շահագործումը :

3.2 ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրն իրականացնելուց հետո հնարավորություն կստեղծվի՝

- Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը ,
- Մշակույթի տանը կից ստեղծել խմբակներ ,
- Համայնքային միջոցառումներ անցկացնելու մշակույթի տան դահլիճում ,
- Աշխատանքից հետո ազատ ժամերին համայնքի բնակչությունը <<հատկապես երիտասարդությունը >> հնարավորություն կունենա հանգստանալու և զբվաղվելու :

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Գյուղատնտեսությունում հողատերերի թիվը 708 այդ թվում

Ա. Անհատական տնտեսություն 708 :

1 . Գյուղարտադրանքի հիմնական տեսակների արտադրություն

Ա. Ծիրան

Բ. Դեղձ

Գ. Կեռասենի

Դ. Խաղող

Ե. Առվույտ

Զ. Բանջար բոստանային կուլտուրա

2. Անասնապահություն

Ը. Կաթ

Թ . Միս

5. ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Պտղատու այգի	175.2 հա
Բ. Խաղողի այգի	170.3 հա

Գ. Բանջար- բոստանային կուլտուրաներ 128հա

Դ. Առվույտ 128 հա

4. Անասնագլխաքանակ 735 գլուխ

Ա. Խոշոր եղջերավոր անասուններ , այդ թվում

Կովեր 233

Բ. Մանր եղջերավոր անասուններ 468

Այդ թվում մայրեր 414

Գ. Խոզեր 190

այդ թվում մայրեր 32

Դ. Թռչուններ 3549

Այդ թվում հավեր 3490

Գյուղատնտեսական տեխնիկաների և գործիքների քանակը

Մասնավոր սեփականություն

Թրթուրավոր տրակտոր 2 հատ :

Անիվավոր տրակտոր 21 հատ :

Խոտհնձիչ տրակտոր 2 հատ :

Բեռնատար ավտոմեքենա տարբեր մակնիշի – 23 հատ :

Տրակտորային կցասայլեր - 18 հատ :

Գութաններ - 9 հատ:

Շարքացան - 4 հատ:

Խոտ հավաքող մեքենա 5 հատ :

Պարարտանյութի ցրիչ - 4 հատ :

Այլ տեխնիկաներ - 8 հատ :

6. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ :

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը Արմավիրի մարզի Շենավան համայնքում այն ունի հետևյալ պատկերը :

N	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ	2015 թ. Փաստացի /հազ. դրամ/	2016 թ. Հաստատված /հազ. դրամ/	2017 թ. նախատեսվող /հազ. դրամ/
1	ՀՈՂԻ ՀԱՐԿ	10250.0	17. 508	17.508
2	ԳՈՒՅՔԱՀԱՐԿ	2030.0	2990	2990
3	ՀՈՂԻ ՎԱՐՁԱՎՃԱՐ	1400.0	1700	1700
4	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ	0	110	110
5	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ	0	0	0
6	ԴՈՏԱՑԻԱ	15980.0	17280.0	17280.0
7	ՊԵՏ ԲՅՈՒՋԵՅԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ /ՍՈՒԲՎԵՆՑԻԱ/	0	--	--
8	ՀՈՂԻ ՕՏԱՐՈՒՄ	0	0	--
	ԸՆԴԱՄԵՆԸ	29.660.0	22.097.508	22.097.508

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համաձայն Տեղական ինքնակառավարման բնագավառի ՀՀ օրենսդրության , ՀԶՀԾ –ն հանդիսանում է համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների ձևավորման ծրագրային հիմքը ՀԶՀԾ –ում 2017 - 2021 թթ , համար նախատեսված ոլորտային ծրագրերի , համայնքային ծառայությունները և միջոցառումները հիմք կհանդիսանան համայնքի այդ տարիների բյուջեների կազմման , ընդունման և իրականացման համար : Գործնականում , ՀԶՀԾ –ի իրականացումը կհանգի հիմնականում համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների մշակման և կատարմանը : Հետևաբար , համայնքի 2017-2021 թթ – ն ՀԶՀԾ –ն ամբողջական ծավալով իրականացնելու հարցը մեծապես կախված կլինի համայնքի առաջիկա հինգ տարիների բյուջեներում նախատեսվող մուտքերի փաստացի կատարման մակարդակից , ինչպես նաև դրանց խնայողաբար ու արդյունավետ ծախսումից :

ՀԶՀԾ –ի իրականացումը շատ բանով պայմանավորված կլինի նաև , թե համայքնի ՏԻՄ- երին ինչքանով կհաջողվի նպատակային և արդյունավետ համագործակցություն ծավալել ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմինների (հատկապես Արմավիրի մարզպետարանի) , ՀՀ –ում գործող միջազգային և տեղական դոնոր , մասնավոր և քաղաքացիական հասարակական կազմակերպությունների , անհատ գործարարների հետ համայնքային տնտեսությունում ապահովելու ՀԶՀԾ – ով պլանավորված ներդրումները և միջոցները :

ՀԶՀԾ – ի կառավարման հանձնաժողովը տարին երկու անգամ կիրականացնի ՀԶՀԾ –ի տվյալ տարվա համայնքային ծրագրերի և ծառայությունների ներքին մշտադիտարկում , որի արդյունքները կներկայացվեն համայնքի ղեկավարին , վերջինիս կողմից էլ համայնքի

ավագանուն ի գիտություն : ՀԶՀԾ –ի իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողությունը կիրականացնեն համապատասխանաբար համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին :

Համայնքի ղեկավարը , մինչև ՀԶՀԾ – ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը համայքնի ավագանուն ներկայացնելը կկազմակերպի և կանցկացնի դրա աշխատանքային և հանրային բաց քննարկումներ՝ 15 օրյա ժամկետում , այդ մասին իրազեկելով համայնքի բնակչությանը և շահագրգիռ այլ անձանց :

Համայնքի ղեկավարը ՀԶՀԾ –ի իրականացման տարեկան հնգամյա հաշվետվությունը , դրա հանրային քննարկումների ժամանակ համայնքի հանրությունից ստացված և ընդունված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանք և կից այլ փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով կներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը :

Համայնքի ավագանին ՀԶՀԾ –ի իրականացման տարեկան կամ հնգամյա հաշվետվությունը կքննարկի օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված կարգով և կկայացնի համապատասխան որոշում :

Հիմնվելով ՀԶՀԾ –ի իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա , ՀԶՀԾ – ի վերանայման անհրաժեշտության դեպքում , համայնքի ղեկավարը ՀԶՀԾ –ում փոփոխությունները ու լրացումներ կատարելու վերաբերյալ իր և համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները սահմանված կարգով, ներկայացնի համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը :

ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԱՍԽԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Խ. Ավետիսյան

գ. Շենավան 2017թ. Հունվարի 16